

## ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ՄՏ. ՆԱԳԱՐՅԱՆՑԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ստ. Նազարյանցը հայագիտության մեջ բավականին հանգամանալից ուսումնասիրված հեղինակներից է: Հրապարակի վրա կան արժեքավոր մի շարք մենագրություններ, որոնք որոշակիորեն ամբողջացնում են 19-րդ դարի հայ նշանավոր գործի հասարակական-քաղաքական և լուսավորչական գործունեությունը<sup>1</sup>: Սիսակի կլինիկ, սակայն, կարծել, թե Ստ. Նազարյանցի հայագիտական ժառանգության ուսումնասիրությունն ըստ ամենայնի ավարտված է, մասնավորապես, եթե խոսքը վերաբերում է ճրա պատմագիտական գործերի քննությանը:

Ստ. Նազարյանցի հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման գործում կարևոր դեր խաղաց Ներսիսյան Աշամավոր դպրոցում նրա ուսումնառությունը, այսուեղ սկսված մտերմությունը Խ. Արովյանի հետ: ...1849 թ. Նազարյանցը փոխադրվեց Մոսկվա: Լազարյան ճեմարանում նրան պատվավոր ընդունելություն ցուց տվեցին: Շատ չանցած, Խաչատուր Լազարյանի օժանդակությամբ 1851 թ. լույս տեսավ Նազարյանցի «Յաղագս փորձնական հոգեբանութեան ճառ» վերմագրով գիրքը: Սա հայերեն լեզվով նրա առաջին աշխատությունն էր և թեև գույն պատմագիտական երկ չէր, սակայն հեռու չեր պատմական հարցերի քննարկումից: Ավելի ճիշտ՝ այն պատմա-քանասիրական բնույթի հրապարակախոսություն էր: Առավել հաջողված մասը գրի առաջարանն է, որը հեղինակը խորհրդածում է, թե «ինչպես ընթացավ Եվրոպան և հասավ այն գերազույն բարգավաճման, որով «բարձր ի գլուխ պարծենում են ավելի քան բոլոր ազգերը»<sup>1</sup>: Խորհրդածույն այն հարցերի շուրջ, Նազարյանցը դիպուկ բնութագրում է յուրաքանչյուր հայի կոչումը՝ «ճանաչել ու սիրել հայերները, իսկ դա նշանակում է խուզողական մտքով քննել յուր ազգի պիտույքները և աշխատել նրան դարման մատուցանել»<sup>2</sup>:

Աշխատանքում հնչում է ապագա լուսավորչի պատվիրանը. «Քանի դեռ հայերը կարողություն չունեն իրենց բուն լեզվով մտածելու, խոսել ու գրել՝ չկա նաև ո՛չ հայկական ուսում ու լուսավորություն, և ո՛չ իսկ հայություն: Եվ հայություն առանց հայբար մտածելու և խոսելու՝ բարբարոսություն է մեր աչքում, որովհետև ազգ և ին-

<sup>1</sup> Տե՛ս Ստ. Շահազիզ. Հրապարակախոս ծայն. Մոսկվա, 1881, Լեռ. Ստեփանոս Նազարյան. Թիֆլիս, 1902, Մ. Միսիթարյան. «Հյուսիսափայլ» ամսագիրը. Երևան, 1958, Ռ. Կարապետյան. Ստ. Նազարյանց: Փիլիսոփայական հայացքները, Երևան, 1976, Ռ. Նանումյան, Ստ. Նազարյանց, Երևան, 1978 և ուրիշներ:

<sup>2</sup> Ստ. Նազարյանցի երկերը, Թիֆլիս, 1913, էջ 14:

զու մի են, առանց լեզու չկա ազգ, ինչպես և ազգի լեզուն մի անդմբոնելի բան է»<sup>3</sup>: Այստեղից էլ Նազարյանցի հիմնական գաղափարը՝ ազգ և լեզու, մշտառն մի գաղափար, որն այսօր հատկապես շեշտված արդիական հնչողություն ունի: Նազարյանցը դիպուկ մկատում է, որ օտար լեզվով հայ երեխաներին լուսավորելը նույն է, թե «ստամալով սեփական կենդանությունը, օտարի կենդանությամբ ապրել ախորժեն»<sup>4</sup>: Նազարյանցի այս գիրքը փաստորեն մի հայտ էր, որում առաջարդված գաղափարները զարգացում ստացան զրա հետազոտական աշխատություններում:

1853 թ. Նազարյանցը լուս է ընծայում իր առաջին աշխարհաբար գիրքը՝ «Վարդապետարան կրոնի հասարակաց հայախությամբ» վերնագրով: Հեղինակն այստեղ փորձ է անում գնահատել հայ հին պատմագիտությունը և փորձն այդ անում է նախ և առաջ լուսավորական դիրքերից: «Եվրոպական գիտությունը և արհեստը, գրում է նաև, - որոնց միջնորդությունովը կարողանային մեր տողաքը ծանոթանալ աշխարհի, բնության և մարդկության որպիսություններին, որեւէն նորանոր գաղափարներ ստանալ, սանանի և ճախանալ այնպիսի տեղեկություններով, որ հոգեկեն և մարմնապես պահպանի էին ազգի զավակներին, այլպիսի կենդանական և կենդանացուցիչ նյութեր չկան հին մատենագրության մեջ»<sup>5</sup>: Սակայն, այսուհանդեռ, նա ոչ միայն չի թերագնահատում պատմագիտության դերը հայ մշակույթի զարգացման գործում, այլև հոլով կարևորում է այն: «Բայց ազգային, հարազատ լուսավորությունն առանց բուն ազգային մատենագիտության սուս բան է, անարմատ ծառ է»<sup>6</sup>:

Նազարյանցն այսուհետև խորհրդածում է այնպիսի մի կարևոր հարցի շուրջ, որպիսին ապազգայնացումն է: Նա բավականին դիպուկ մկատում է, որ «Հայությունը քարոզելով, հայություն հրամանելով, հայություն պահանջելով ոչինչ բան չի առաջանա»<sup>7</sup>: Լուսավորիչ-հրապարակախոսը փաստորեն առաջարդում է ազգապահպանման նոր ու իրատեսական ծրագիր: «Մինչև հայոց հայրենասերքը պատվավոր ու քաջալերական ասպարեզ չբանան հայոց գյուվակի առջև...զուր և անօգուտ են ամենայն խոսք և խոսվածք»<sup>8</sup>: Դժվար չէ նկատել, որ Նազարյանցի այս մտքերը մեր օրերում էլ դեռ չեն կորցրել իրենց արդիականությունը:

Թեև մի քանի հոդվածներից բացի, Նազարյանցն այդպես էլ պատմագիտական բնույթի ծանրակշիռ գործ չգրեց, սակայն պատմության և պատմագիտության խնդիրները տևակեն հուզել և հետաքրքրել են նրան: Պատմության ճանաչողությանը նա տալիս էր հանգուցային նշանակություն: «Ամեն ազգ, թե նորա պարծան-

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ Ժ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>8</sup> Նույն տեղում:

քը, և թե նորա ամոթը, Բնտեսանք է նրա պատմության, ասել է այն գործերի ու անցքերի, որ եղած են ազգի կյանքի մեջ և այսպես ով որ կամի ծանոթանալ յուր ազգի որպիսությանը, պարտական է ուսանել դրու պատմությունը, դրու անցյալը, որի մեջ դրած է և յուր հատուկ ներկայի բանալին, այսինքն, հասկանալով անցած զնացածը, կարող է հասկանալ նաև ներկայի խորհուրդը»<sup>9</sup>, - գրում է Նազարյանցը «Հայատան» հոդվածում:

1844 թ. Կազանի համալսարանի «Տեղեկագրի» առաջին համարում տպագրվում է Նազարյանցի «Թոուցիկ հայացք հայ մատենագրության մինչև 13-րդ դարը» ուշագրավ հոդվածը: Հեղինակն ամենուր ընդգծում է հայերի՝ մատենագրության հանդեպ ունեցած սերը. «Հայ մատենագիրների անընդհատ շարքն անառակելիութեն ապացուցում են, - գրում է Նազարյանցը, որ չորրորդ դարից սկսած մինչև մեր օրերը, չափազանց սուր միջոցներով, պետականությունից զրկված պայմաններում... հայերն անդիմադրելի մի ուժով ամենուր հիմնել են իրենց գրադարանները: Ուր էլ որ հաստատվել են նրանք, հրատարակել են իրենց գրավոր հուշարձանները և ակնհայտորեն ապացուցել իրենց չերմ սերը գիտությունների վերածնության հանդեպ»<sup>10</sup>: Նազարյանցն այստեղ առանձնակի շեշտում է հայ պատմիչների գործերի համաշխարհային նշանակությունը. «Հայ մատենագիրների շարքում, - գրում է նաև, - հատկապես կարևոր են այն պատմիչները, որոնք մեր հայունիքի պատմությունը ծանոթացնելուց զատ, հաճախ լրացրել են մեր տեղեկությունները ասիական ժողովուրդների ճակատագրի մասին»<sup>11</sup>: Ավելին, Նազարյանցը գրում է, որ հայ պատմիչների գործերը «իրադարձությունների նկարագրության իրենց ճշմարտացիությամբ ու խոսքի մշակվածությամբ՝ նույնիսկ գերազանցում են արաբական, պարսկական և բյուզանդական կենսագիրներին»<sup>12</sup>:

Հայ պատմագիտության զարգացումը Նազարյանցն, անտարակոյս, կապում էր նաև՝ քրիստոնեության ընդունման, ապա և հայ գորերի գյուտի հետ. «Հայերն այս իրադարձությանը, որպես քրիստոնեական ժողովուրդ, բոլոր փոթորիկներով հանդերձ, որոնք չորրորդ դարից սկսած ալեկոծում էին Փոքր Ասիան և հատկապես Հայատանը, պարտական են իրենց ինքնատիպության պահպանման համար»<sup>13</sup>: Նազարյանցն այնուհետև առանձին-առանձին ներկայացնում է հայ պատմիչներին, բնութագրում նրանց գործերը, կարևորում նրանց նշանակությունը ինչպես հայոց պատմության, այնպես էլ հարևան երկրների պատմության ուսումնասիրության համար: Ընդ որում, հայ պատմագիտության ոսկե դարը Նազարյանցը համարում է ոչ միայն հինգերորդ դարը, ինչպես ընդունված է մեզանում, այլ բերում և հասցնում է մինչև 13-րդ դար, երբ «խավարն ու տգիտությունը խլացրեցին հայ ժողովրդի երթեւ-

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>10</sup> Տե՛ս Ստ. Նազարյանց, Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 10:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 15:

գի առուց ոգին», և Մխիթարյանների հիմնադրումով միայն Նազարյանցի կարծիքով. «Բայերի մեջ կրկին արթնացավ հոգևոր և կրտսական կյանքը»<sup>14</sup>:

Նազարյանցի ուսակերեն լեզվով գրած մյուս հրապարակումը ևս պատմագիտական շունչ ունի՝ «Հայկան գրերի պատմության տեսությունը նորագույն ժամանակ-հերում»: Այն նախորդի տրամաբանական շարունակությունն է: «Ներկայացված և քննության է ենթարկված 14-18-րդ դարերի հայ պատմագիտությունը: Հեղինակը հատկապես առանձնացնում է 18-րդ դարը և նրա հետ է կապում հայագիտության նոր վերելքը: Այսուղեւ էլ Նազարյանցը բարձր է զնահատում Մխիթարյանների կատարած դերը հայագիտության զարգացման գործում:

«Թողուցիկ հայոց հին պատմությանն ընդհանրապես» հոդվածում Նազարյանցը գրում է. «Վերջին ժամանակներում հայոց հին պատմությունը կորցրել է այն մեծագույն բնութագիրը, որը նա պահպանել է երկար դարեր»<sup>15</sup>: Հեղինակը սակայն գտնում է, որ կապված լինելով հին աշխարհի բոլոր կարևորագույն հրադարձությունների հետ, «Հայաստան, անկանած, գալիք սերունդներին թողել է իր գոյության փայլում մի բնութագիր»<sup>16</sup>: Նազարյանցն այնուհետև համառոտ ներկայացնում է հայոց պատմությունը: Սակայն պնդել, թե այն լուրջ քննարկման է ենթարկված հեղինակի կողմից, սխալված կլինենք: Նազարյանցը հաճախ շփոթում է հայոց զահակալ ներին և նրանց թագավորության տարիները, իսկ Կիլիկյան Հայաստանի պատմությունը, որով և ավարտվում է ակնարկը, համարել է Հին Հայաստանի պատմություն:

Պատմագիտական տեսակետից հատկապես արժեքավոր է հոդվածի վերջին հատվածը: Նազարյանցը գրում է. «Պատմական դեպքերը ցուց են տալիս, որ ազգերի մոտ, որոնք երկար ժամանակ տառապել են օտարի լծի տակ, ազգային զգացումներն ու հայրենիքի նկատմամբ սեր թուլանում է և ի վերջո անհետանում տիրապետող տարրի ազդեցության տակ: Այս օրենքի համաձայն, հայերը, հնաշեն երևում է, պետք է ընդմիշտ կորցնեն իրենց հայրենիքի նկատմամբ հավատարմության զգացումը և ազգային կերպարը...»<sup>17</sup>: Այստեղից էլ հեղինակի զիշավոր հետևողությունը. «Այս ամենով հանդերձ, - շարունակում է Նազարյանցը, - Հայաստանը մինչև օրս պահպանել է իր մեծության շատ գծեր... ուր էլ որ գտնվել են հայերը, ուազմական թե քաղաքացիական ծառալության մեջ, նրանք պահպանել են իրենց ազգային հետքերն ու հայրենիքի փառքի մասին եղած հիշողությունը»<sup>18</sup>:

Հրապարակման մեջ Նազարյանցը հանգամանորեն ներկայացնում և զնահատում է եվրոպացի գիտնականների նպաստը հայագիտության զարգացման

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 151:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 159:

<sup>18</sup> Նույն տեղում:

խնդրում: Ընդ որում, Բեղինակը միայն գովեստի խոսքեր չի շռայլում Արանց հասցեին: Նա հաճախ բանավիճում է Արանց հետ, արտահայտում հարցի մասին սեփական տեսակետը. «Ոքան էլ որ որոտալից լինի Սեմ-Մարտենի փառքը գիտական աշխարհում և ոքան էլ որ մեծ լինի Արան պատկանող պատիվը,- զրում է Նազարյանցը,- այս ամենը սակայն չպետք է զինաթափի մեզ՝ իրավացի և անշահիսների քննադատության համար: Եվ չնայած տեղին չէ այստեղ երկար ու բարակ խոսել այն սխալների մասին, որոնք ակնհայտ են Հայաստանի մասին Արանկարագործություններում, միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք գտնում եվրոպացի գիտնականի ուշադրությունը հրավիրել այն դիտողությունների վրա, որը կատարել է հայկական հնությունների լիիրավ դատավորներից մեկը՝ Ղ. Խճիճյանը»<sup>19</sup>: Նազարյանցն այսուհետև ընթերցողին է ներկայացնում այդ դատողությունները և, ինչպես երևում է շարադրանքից, համակրանքը հայ պատմագետի կողմն է:

Գործեն բոլոր և հատկապես հրապարակախոսական բնույթի աշխատություններում, հստակորեն ուրվագծվում է Նազարյանցի պատմական մտածողությունը: Դրա խոսուն վկայությունն է «Հայկական լեզվի խորհրդադրությունը» հոդվածը, որով բացվում է 1913 թ. Թիֆլիսում հրատարակված Արա Երկերի ժողովածուն: Թվով է, թե հիմնական նյութը պետք է վերաբերեր հայոց լեզվին, ակայն այն շեշտված հրապարակախոսական-պատմագիտական ուղղվածություն ունի: Հեղինակն իր մտահոգությունն է հայտնում հայ ժողովոյի ապագայի հանդեմ և առիթը բաց չի թողնում կոչ անելու իր «եղբայրակիցներին»՝ ապրելու ազգի հոգակրով և ամեն կերպ սատար կամճակելու հրա ճակատագրին. «Են մենք որպես ազգի անդամներ,- զրում է նա,- որպես ազգի տղամարդիկ, որպես հասարակաց ազգի պաշտոնյաներ, որպես բանական և բարոյական էակներ, ի՞նչպես ենք լցուցանել մեր պարտականությունը, ի՞նչ ազգասիրական գործ ենք կատարել, ի՞նչ ճշմարտություն ենք առաջ տարել, և ի՞նչ մոլորություն ենք անհետացրել ազգի մեջ, ի՞նչ կատարելություն ենք ստացել մենք և ո՞ր պակասություններից ենք հրածարվել, և արդյոք ազգի իմացական և բարոյական դրությունը փոքր ի շատե բարվոքացե՞լ է մեր հատուկ խնամատարությամբը»<sup>20</sup>: Կամ արդյո՞ք արդիական չի հնչում Նազարյանցի հետևյալ միտքը. «Հայրենիքը լեզու առած հարցնում է այսօր ժողովորի բոլոր անդամներից, թե՛ հասարակականից, թե՛ ումատորից, և թե՛ չումատորից, թե՛ հոգևորից, և թե՛ աշխարհականից, որովհետև ամենքն ազգի որդիք են և ումեն իրենց առանձին պարտականությունները դեպի նա. ինչ բարի գործերով կամ խոսքերով առաջանեն ենք կացուցել ձեր ազգը, ձեր Եկեղեցին...»<sup>21</sup>: Նա կշտամբանքով մկանում է, որ եթեն «մյութական գործի մեջ այդպես խեղոք է հայը, բայց հոգևորի մեջ կամի անգործ մնալ և բոլոր հոգաբարձությունը Աստծոյ հրաշքին թողով»<sup>22</sup>:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 93:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 5:

Ուստի պատահական չէ, որ լուսավորական գաղափարների տարածման խնդրու նազարյանցը կարևոր տեղ է հատկացնում պատմությանը: Այսպես, նազարյանցի ծրագրի համաձայն «Հյուսիսափայլի» երկրորդ բաժինն ամբողջովին պետք է նվիրեր պատմության հարցերին: «Սորա մեջ կայտունակվին համաշխարհային պատմության վերա ճառեր, ուշադիր լինելով ուսացած ազգի պատմությանը: Այստեղ լինելու են հիշատակի արժանավոր անցքերը համաշխարհային պատմության մեջ, վարքագրական պատկերացույցը երևելի մարդերի թե՛ Եվրոպաի, թե՛ Ասիայի, և թե՛ Ռուսաստանի մեջ հատկապես: Հայրենական ազգի պատմությունը, ինչքան որ Հայք կարողացել են գործ կատարել աշխարհի հրապարակումը, քաղաքական հանդեսի մեջ, պիտո է այստեղ ավանդությունը և վնասարարությունը ազգին, նոցա պարծանքը և ամոթը, որպես ուսումն ու խրատ հետագա հայերին»<sup>23</sup>: Համաձայն վեճը, որ նազարյանցը ճիշտ է հասկացել ու ըմբռնել պատմության դերն ընդհանրապես, իսկ հայոց պատմության խնդիրները՝ առավելապես:

Սեփական ժողովրդի պատմության իմացությունը նազարյանցը դիտում է ոչ թե սուկ որպես գիտելիքների իմացություն և պատմական անցքերի մասին տեղյակություն, այլ նրանում տեսնում է ներկայի և ապագայի խորհուրդը, գործունեության ուղեցուց: «Ով որ կամի ծանրութանը յուր ազգի որպիսությանը,- գրում է նա նույն «Հայաստան» հողվածում,- առ կուսանի այդպես ճանաչել յուր ազգը և յուր անձը, որ ինչպես անբաժանելի անդամ ազգի, կցորդ ու մասնակից է դորա փառքին և դորա անարդությանը... Այս է ահա մի ազգի պատմության խորհուրդը ամենայն մտածող մարդու համար, և այս է մասնավորապես Հայկազյան ժողովրդի պատմության խորհուրդը ամենայն բանական հայի համար մեր լուսավոր դարի մեջ»<sup>24</sup>: Իհարկե, նազարյանցի այս հրապարակման ոչ բոլոր մտցերն են ընդունելի: որոշ տեղերում պատմագիտական նյութը ուղղակի խեղիկում է հրապարակախոսական հոսանքի մեջ: Օրինակ, առ անտեղի քննադատության է արժանացնում նախորդ դարերի հայ մշակույթը միայն այն բանի համար, որ «Հայոց հնահսու (գրաբար՝ Հ.Հ.) հեղինակների պատմագրությունը անհասկանալի էին մեր ազգին, այլև զանազան պատճառներով նժվարավ ձեռք բերելի նոցա համար»<sup>25</sup>:

Նազարյանցը հավակնություններ է ներկայացնում նաև ժամանակի հայագետներին և թերությունը է համարում, որ «Հայոց ուսումնականքը Ռուսաստանումը, փոխանակ այդպիսի անհասկանալի հնահսու մատենագիտությունը հայոց պատմության վերա, թարգմանելու աշխարհաբառ և տալու ազգի մարդերին, թարգմանում են դորանք ուսւերեն»<sup>26</sup>, գրում է նաև: Այդպիսով, նազարյանցն անհարկի թերարժե-

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 40-41:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 41:

քավորում է այն կարևոր իմաստը, որով գրաղված էին 19-րդ դարում մեր անվանի շատ հայագետներ: Բայց չէ՝ որ այդ թարգմանությունների հիման վրա իրենց ձեռք ըստ Վերցրին ոռուական մշակույթի նշանավոր շատ գործիչներ՝ հայոց պատմությունը և ներկայացնելով ոռու և համաշխարհային ընթերցողին: Իհարկե, վերջին մտքի հետ համամիտ է նաև Նազարյանցը, սակայն գտնում էր, որ աշխարհաբար թարգմանելու գործը ևս կարևոր է:

Միաժամանակ հարկ է նշել, որ Նազարյանցը 19-րդ դարի հայագետներից առաջնորդ թարգրացրեց այդ հարցը և իրավացիորեն նկատում էր. «Հայոց պատմությունը ֆրանսիական և ոռու լեզվով տալ հայոց ազգին և հայոց մանուկին, երևում է մեզ մի ամբողջ կարգից ու օրենքից դուրս, մի այլանդակ բան: Ոչ մի ազգի մեջ տեսնված չէ... որ իտալացին, ֆրանսիացին և անգլիացին իր պատմությունը և անցած անցքերը օտար լեզվով ավանդեր իր ազգին»<sup>26</sup>:

Նազարյանցը հայագիտության մեջ առաջիններից մեկը գգուշացրեց հայեցի ուսուցմանը սպասվող վտանգի մասին: Իհարկե, դա չեր նշանակում, թե նա ընդհանրապես դեմ էր Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացմանը: Ընդհակառակը, հեղինակը Ռուսաստանի հետ դաշինքի և սերտ հարաբերությունների կողմանակիցն էր, սակայն իրավացիորեն գտնում էր նաև, որ ոռուականացումը տանում է դեպի ապազգայնացում: Ե. Ֆրանցյանի գրում մի այսպիսի փաստ կա. «1870 թ. Կ. Եղյանին գրած նամակում Նազարյանցը գրում է, թե «իմ շրջաբայաց քննությամբ, Ռուսաստանի ազդեցությունը հայերի վրա այնքան խորին է եղած մինչև օրս, որ հայոց թերանում հայերնեն խոսք մնացած չէ»<sup>28</sup>: Ապազգայնացման վտանգի առաջնամարտը միակ և գորավոր միջոցը Նազարյանցը տեսնում էր հայերի մեջ ազգային լուսավորություն տարածելու մեջ. «Ազգային լուսավորությունը միայն կարող է հոգի և զորություն տալ ազգին՝ դիմանալու օտարի կլանողական բռնությանը»<sup>29</sup>, - գրում է նա: Այդ պատճառով էլ նա պահանջ է դնում, որ հայ մանուկն իր կրթությունը ստանա «ազգային օրինավոր դպրոցում»<sup>30</sup> և հետո միայն զնա ոռուական կամ եվրոպական բարձրագույն դպրոց ուսանելու: Նկատելով այդ վտանգը, Նազարյանցը հորդորում է գիտակցական կոիվ մղել ապազգայնացման դեմ և այդ կոիվը, նրա կարծիքով, պետք է տանել ազգովին:

Պատմագիտական առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում նրա «Հայերի կոչումը մարդկության մեջ» արժեքավոր հոդվածը: Վերջինս վկայում է այն բանի, որ Նազարյանցին լրջորեն անհանգստացնում էին հայերի նկարագրում արմատացած բացասական որոշ հատկությունները: Միանգամից ասենք, որ հարցը քննարկելիս, հեղինակն անձնական մղումներ չի ունեցել, այլ առաջնորդվել է

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 41-42:

<sup>28</sup> Տե՛ս Ե. Ֆրանցյան, Հայ հասարակական միտքը, Կաթիրե, 1928, էջ 71:

<sup>29</sup> Տե՛ս Նազարյանց, Երկեր, էջ 127:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 94:

բացառապես ընդհանուրի՝ ազգային մշակովթի զարգացման, նայ ժողովրդի հավաքականության զորեղացման և ազգաշինության շահերով։ Ինչպես այլ, այնպես էլ այս հիմնահարացը վերլուծելիս նազարյանցը հանդես է բերում պատմաքննական մոտեցում։ Դիտարկելով և քննելով իրեն մտահոգող նշված երևույթները պատմական տեսանկյունից, նա ցուց է տալիս դրամք ճնող պատճառները։ Նա ցավով է նշում, որ անմիտաբանությունն ու անհամերաշխությունը հայերի ազգային բացասական նկարագրի ամենատարածված գծերից մեկն է, որն իր կործանիչ դերն է ունեցել մեր պատմական անցյալում և դժբախտաբար նաև հետազոտում և եթե կուգեր, զաւ մերկայում։ «Հայոց ազգը այն հնույթյան դարերումը, երբ նա ուներ փոքր իշխան քաղաքական կյանք, թագավորություն և քաղաքական տնտեսություն, ունեցել է արդար քաջ տղամարդեր, անձնադիր հայրենաներ անձինք, բայց միաբանություն, համաձայն և համաշունչ գործակատարություն շատ փոքր, կամ երբեք ոչ. ազգի հայտարարական տները... անխորհրդաբար աշխատել են միշտ և միշտ սահմանափակել ու նեղացնել թագավորի իշխանությունը, և այդպես թուլացնել բոլոր թագավորության գորությունը. շատերը իրենց անձնական օգուտը բաժանելով ազգի օգտից, մատնիչ ու դարանագործ են եղել միմյանց և այդպես վճասել են իրենց և հայունիքին»<sup>31</sup>։

Նազարյանցն, իհարկե, յուրովի է բացատրում երևույթի պատճառները։ Նա համոզմունք է հայտնում, որ պատմական և հասարակական միշավայրն իր դրոշմն սնապայմանորեն թողել է ոչ միայն անհատների, այլև ժողովուրդների ու ազգերի հոգերանության վրա։ Հայությունը բազում դարեր ապրելով օտարի անարգ ու բռնակալ լծի տակ, անխոսափելիորեն ձեռք է բերել զանազան բացասական հատկություններ «կորուսել է խոսելու սովորությունը, մոտածելու կարողությունը» և իր գոյությունը պահպանելու համար «ուսել է միայն խորամանկություն և խարդախություն ինը միակ պաշտպանողական գենք մի ստրուկ ազգի ընդդեմ յուր տանջող և անիրավ բռնակալի»<sup>32</sup>։ Ուստի, նազարյանցն այն կարծիքն է հայտնում, թե «Հայոց ներկա դրությունը չէ մի պատմահական բան, մի անիրավ ընթացք բախտի կողմից դեպի Հայկի որդիքը, այլ մի հարկավոր հետևամք նոցա թույլ և աննշան պատմական կանչքի»<sup>33</sup>։

Իհարկե այս ամենը հեղինակը նշում է առաջին հերթին դասեր քաղեկու, շտկելու, վերակառուցելու նպատակով. «...այսօր մեր ազնիվ եղբայրքը, գրում է նա, յուրյաց անձնական ախտերը վերանձնությամբ զոհ բերելով հայրենիքի սեղանի վերա, դառնան մի կամք, մի հոգի, մի սիրտ հայկական ավերակ տունը շինելու համար»<sup>34</sup>.

31 Նույն տեղում, էջ 88:

32 Նույն տեղում, էջ 136:

33 Նույն տեղում, էջ 147:

34 Նույն տեղում, էջ 41:

Դրանումն է Նազարյանցի մեծության չափանիշը: Նա ուշագրավ մեկնություն է տալիս մասնավորի և ընդհանուրի, անհատ գործի և համազգային հասկացության փոխարարեղությունների հարցին: «Ուրացող Մերուժաններ և Վասակներ, քաջ ու հոյակապ հայրենասեր Վարդաններ և Սմբատներ կանգնած են այստեղ միմյանց հանձեւ»<sup>35</sup>, «ոչ ոք կարող չէ ուրամալ հայերի քաջությունը և արիական գործերը պատերազմի մեջ,- գրում է նա,- բայց ցավելի է ասել, որ այդ առաջինական հատկությունները ավելի օգնել են օտարներին, քան թե իրենց: Ահա այս է պատճառը, որ հայոց ազգը արդար եղած է մի քաջ ազգ, բայց համարյա թե նույնական միշտ թույլ և հնագամ ազգ... Ով չի կարող լինել իր առաջնորդը, նա կարոտ է օտարի առաջնությանը»<sup>36</sup>:

Նազարյանցը հպարտությամբ ընդգծում է, որ հայոց ազգը կորած չէ, «եթե ինքը իր անմտությամբ չկամի կորուսանել իր անձը: Հայոց ազգը կորած չէ. Ան ունի աշխարհի հրապարակի մեջ կատարելու մի օր մի մեծ և գեղեցիկ խորհուրդ»<sup>37</sup>: Սկզբում նույնիսկ թվում է, թե Նազարյանցը սրտնեղած է, զայրույթով է լցված, անգամ ողբում է իր ազգի դրությունը, ուզում է «խաչ դնել» այդ «տմարդի ժողովրդի վերա», սակայն վերջում հայ ժողովրդին առաջընթացի կոչ է անում: Ուրեմն ո՞րն է, Նազարյանցի կարծիքով, հայերի կոչումը մարդկության մեջ: Հեղինակը միանշանակ պատասխանում է. «Հայոց ազգը ունի մի մեծ ու հոյակապ կոչումն... հայոց դրությունը իր եկեղեցական կենտրոնովը շատ մոտ հաղորդակից լինելով միմյանց հետ ազգաբար, ցուցանում է անշափ շատ հարմարություններ և երաշխավոր է հայերի առաջադիմության համար»<sup>1</sup>: Իր խոսքերով ասած, Հայաստանն այն «խմորն է, որ դրած է Ասիայի եռացող Այութերի մեջ, որ հոգենեն կյանքի համարյա թե մեռած ծիլերը զարթնեցնե և կենսագործե»<sup>39</sup>:

Նազարյանցը, խոստովանելով ազգի բարեմասնությունները, առանց կշտամբանքի չի թողնում և գրանց, ովքեր իրենց մի կտոր անձնական օգուտի համար հնարքում են ամեն նոր կարգ ու առաջադիմություն, որոնց համար չկա ո՛չ հայրենիք, ո՛չ ճշմարտության զաղափար: Հոդվածի գլխավոր զաղափարն այն է, որ հայերը պիտի կատարեն իրենց գլխավոր խորհուրդ՝ ընդունելով եվրոպական լուսավորություն, այն տարածեն Ասիայի մեջ: Նազարյանցը հարցնում է՝ կա՞, արդյոք, մեր ազգի մեջ մի համապատասխան կշիռ և ուժ, որը կարողանա իրագործել այդ գաղափարները: Նրա կարծիքով, այդ բարոյական ուժը կարելի է մասամբ համարել «Հշմիածնի հայրապետական Աթոռը... Եկեղեցին պիտի լինի իմացական և բարոյական կրթության պարագուխ առաջնորդը... Հարազատ քրիստոնեական Եկեղեցին»:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 93-94:

<sup>39</sup> Նույն տեղում:

պիտի հարկավորապես ուրախանա ամենայն իմացական հառաջադիմության վերա և չվախենա լուսավորությունից<sup>40</sup>:

Նազարյանցի պատմագիտական հիմնական գործերից է նաև «Պատմություն հայոց ազգի» հոդվածը: Այն տպագրվել է 1860 թ., «Հյուսիսափայլի» առաջին համարում: Ծիշու է, հեղինակի հայոց պատմությունը գրելու մտադրությունն այդպես էլ չիրականացավ, սակայն ներածականը, համենայն դեպքու, նա հասցրեց շարադրելու: Խնչպես երևում է «Հյուսիսափայլի» հետագա համարներում տպագրված հոդվածներից, Նազարյանցը հայոց պատմության մի քանի հանգուցային հարցերի վերաբերյալ արտահայտել է իր կարծիքը, և խնչպես նշում է Լեռն, «...կարեի է ասել, թե շատ հետաքրքրական կիմեր ալդ հայոց պատմությունը և նման չէր լինի գոյություն ունեցող պատմություններին: Նազարյանցը կգնար ընթիանուր հոսանքի, ընդհանուր հասկացությունների դեմ և շատ ինքնուրուն, լուրջ հայացքներ կտար մեզ»<sup>41</sup>: Սակայն նա այդպես էլ բավականացավ միայն առաջարանով և շարունակեց այն:

Մենք համամիտ չենք նաև Լեռի այն կարծիքին, թե «Նախարանը ոչինչ արժանավորություն չունի»: Աընդունելի է նաև Լեռի տեսակետը, թե հեղինակը վեցրու ու թարգմանել է ուստ աննշան հեղինակի գրվածը:<sup>42</sup> Նազարյանցը առաջիններից մեկն էր, որ մտածում էր հետանալ այն ոճից, որը բնորոշ էր ժամանակի հայոց պատմագրությանը. «Հայոց պատմիչը,- գրում է նա,- դեռևս գտած չեն բուն պատմական ոճը, թենի արդարն ու մի հեշտ բան չէ և ստացվում է միայն մեծ կրթությամբ և ուշադիր ուսումնասիրությամբ հին և նոր ժամանակների ընտիր գաղափարների»<sup>43</sup>: Հետազոտելով հայոց նոր պատմագիտությունը, նա համգում է այն մտքին, որ վերջինս «խրված է տղայական կոշիկների մեջ, որովհետև դորա հեղինակները մինչև այսօր եղած են արելա մարդիկ»<sup>44</sup>:

Նազարյանցը «Պատմության» առաջարանում կարևորում էր հայոց պատմության ուսումնասիրության նշանակությունը, քանի որ «մարդուս մտածող հոգին կարու լինելով մի անհնիատ սննդառության, ստիպված է որոնել իր համար կենսապահապան նյութեր և պիտո է տարածել իր հայացքը մոտավոր ներկայից դեպի անցյալը»<sup>45</sup>: Միանգամից նշենք, որ Նազարյանցը քննադատական վերաբերմունք ունի անցյալի մեր պատմական դեպքերի նկատմամբ և դառնացած նշում է, որ ներկա «դրությունը չէ մի պատահական բան, մի անհրավ ընթացք բախտի կողմից դեպի Հայկի որդիքը, այլ մի հարկավոր հետևանք նոցա թույլ և աննշան պատմական

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 117, 118:

<sup>41</sup> Լեռ, Ստ. Նազարյանց, Երևան, 1987, հոտ. 6, էջ 96:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>43</sup> Տե՛ս Ստ. Նազարյանց, Երկնք, էջ 166-167:

<sup>44</sup> Նույն տեղում:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 147:

կյանքի նոցա անքաղաքագետ կառավարության հայոց անհմասնասեր բարք ու վարքի, նոցա կործանիչ անմիաբանության և ընդհանուրի օգտին միշտ վնասակար, անմիտ մասնավոր անձնասիրության... երբ հայրենիքը պահպանելու համար պիտո է լսեին և պապանեին առանձնական ախտերը...»<sup>46</sup>: Ցավով նշելով այս ամենը, Նազարյանցը միաժամանակ միաբանության կոչ է անում և այստեղ է տեսնում ազգի բարփոր ապագան: «Հայոց թշվառ Աերկայի ծնող մայր է նույնիսկ ազգի անցյալը և այդ թշվառ Աերկան - եթե հայոց ազգը միաբան հոգատարությամբ և ամենաջան աշխատահրությամբ չբարփոքն դորան, կծնանի մի ևս առավել թշվառ և անմիտ թար ապագա»<sup>47</sup>:

«Հյուսիսափայլի» վերջին համարներից մեկում հրապարակվեց Նազարյանցի «Ազգային թշվառություն» վերնագիրը Կրող Բողվածը: Հեղինակն այստեղ քննարկում է արևմտահայերի ազգային Սահմանադրությունը և փորձում է տալ նրա գնահատականը: «Հյուսիսափայլի» խմբագիրը, ողջունելով ազգային Սահմանադրությունը, խորին դրվագանքով է խոսում նրա հեղինակների մասին: Քննելով սահմանադրության շուրջ ծագած հասարակական-քաղաքական պայքարը՝ Նազարյանցը հիացնում է մի նշանավոր միտք, որն, անշուշտ, արժանի է ուշադրության: «Մենք միշտ դատապարտել ենք, - գրում է Աս, - երբ մի մարդ որոնում է օտարի պաշտպանությունը, բայց նույնական դատապարտել ենք և դեռևս պիտի դատապարտենք ազգային անպիտան գործակարգը, որ յուրյանց լուծը օտարի լծից առավել ծանրացնելով, ստիպում են խեղճ ազգը օտարի լծի վերա նայել, որպես մի երանացուցիչ քաղցր բնորդ վերա: Մեր ազգի բոլոր թշվառության աղբյուրը այս բանի մեջ է առաջ»<sup>48</sup>:

Այսպիսով, քննելով Նազարյանցի պատմագիտական հրապարակումները, կարելի է առանձնացնել չորս կարևոր մոտեցումներ, որոնք կարմիր թելի պես անցնում են նրա Բողվածների միջով:

Առաջին «...Հայերը միշտ ունեցել են իրենց համար և ունին այժմ ևս մի անդրժելի սեր դեպի հայրենիքը. դեպի լեզուն, իրենց սովորությունները, դեպի քրիստոնեությունը... Եկեղեցին պիտո է լինի իմացական և բարոյական կրթության պարագում առաջնորդը... այդ զաղափարը կպարզվի և կպայծառանա և կպտտարերի արժանի քրիստոնեական գործեր, կազմվացն հայոց հոգին և սիրտը և նորափետուր կզարդարեն նոցա կյանքը, և ընդունելով յուր մեջ հարազատ քրիստոնեության և ճշմարիտ լուսավորության սերմերը, կտանե նրանց ասիական աշխարհում, մահու ստվերների մեջ նատած ազգերին»<sup>49</sup>:

Երկրորդ՝ «...Հայոց ազգը արդարեն եղած է մի քաջ ազգ, բայց համարյա թե նույնական միշտ թույլ, օտար իշխանության ստրուկ և հնազանդ ազգ, և աշխարհի

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 147-148:

<sup>47</sup> Նույն տեղում:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 359:

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 93, 117-119:

կարգը միշտ այնպես է, որ մի մարդ կամ ժողովուրդ չկարողանալով լուր բանականությամբ կառավարել ինքը լուր անձը, պիտու է հարկավորապես հնագանի օտարին: Ով չի կարող լինել առաջնորդը, նա կարոտ է օտարի առաջնորդությանը<sup>50</sup>:

Երրորդ՝ «Ժամանակը թևավորված թոշուն է, և մեր կյանքի օրերը նորա են միասին, ամենայն ժամ մի քայլափոխ մոտեցնելով մեր գերեզմանի դրամը: Եկեք ապա, մի քանի բովեւ ուղք հաստատնք այստեղ և իբրև բանական էակներ, իբրև մտածող քրիստոնեալը, իբրև անդամք մի ազգային հասարակության, առաջարկենք մեզ այս հարուցածը. ուստի՞ է մեր գալուստը և ո՞ւր է մեր երթը»<sup>51</sup>:

Չորրորդ՝ «Ուրացող Մերուժաններ ու Վասակներ, քաջ և հոյակապ հայրենասեր Վարդաններ և Սմբատներ կանգնած են այստեղ միմյանց հանդեպ: Ոչ ոք կարող չէ ունենալ հայերի քաջությունը և արիական գործերը պատերազմի մեջ, բայց ցավալի է ասել, որ այդ առաջինական հատկությունը ավելի օգնել են օտարներին, քան թե իրենց...»<sup>52</sup>:

«Հայոց ազգը կորած չէ. նա ունի աշխարհի հրապարակի մեջ կատարելու մի օր մի մեծ և գեղեցիկ խորհուրդ: Հայոց ազգը վերաբերությամբ դեպի ի Ասիա, ունի մի մեծ և հոյակապ կոչումն. նորան կարելի է համարել այն խմորը, որ դրված է Ասիայի եռացող Այութերի մեջ, որ հոգեղեն կյանքի համարյա թե մեռած ծիլնը զարթնեցնեն և կենացգործնե...»<sup>53</sup>:

Այսպիսին են Նազարյանցի պատմագիտական մտածողության զյսավոր արդյունքները: Մեծարել ազգային պատմության լուսավոր դրվագները՝ չի նշանակում քողարկել նրա անցյալի կամ ներկայի մոռայլ էջերը: Զգոնացնելով հայերի ինքնագիտակցությունը և այն ուղղելով ամեն տեսակ հնի դեմ, Նազարյանցը եռանդով վեր էր հանում ազգային պատմության ստվերային էջերը, զգաւտացնում նրան:

Իհարկե, Նազարյանցի հայացքները ժամանակին նույնակերպ չընդունվեցին: Այդ մասին բավականին հանգամանորեն պատմում է Սմբատ Շահազիզը «Հրապարակախոս Ճայն» գրքում, որը հատուկ գրվեց նրան ժամանակի «գնահատումներից» պաշտպանելու համար: Շահազիզը Նազարյանցի գործունեությունը նմանեցնում է Սահակ Պարթենի հետ, երբ «ինքնակերորդ դարի կաշառաքեն և ախտամոլ նախանիքը կեղու անուն դնելով մեծ Սահակի վրա, գլորելով պթողից, որքան և աշխատեին իրենց գործը սուրբ համարել, բայց ազգը դայլոց դատապարտեց այդ գործը... Այսպես՝ Արովյան և Նազարյանց, Նազարյանց և Արովյան՝ մեր աչքում համասեռ բաներ են, երկուսի ևս նպատակը միևնույն է. երկուսը ևս այլևայլ ճանապարհներով ծառայել են միևնույն հավիտենական ճշմարտությամ՝ նոր պիտու է ծաղկի, ինչն մեղմանա և տեղ տա: Գալոց ազգը, մի օր ուսումնասիրելով լուր հոգնոր զար-

50 Նույն տեղում, էջ 88:

51 Նույն տեղում, էջ 93:

52 Նույն տեղում, էջ 88:

53 Նույն տեղում, էջ 93:

գացման պատմությունը պիտի ասե. «Ե՛Վ Ալբովյանը, և' Նազարյանցը ժամանակի իսկ որդիք էին»<sup>54</sup>. Եվ ժամանակը հաստատեց Շահագիզի խոսքերի ճշմարտացիությունը:



54 Տե՛ս Սմ. Շահագիզ, Հրապարակախոս ձայն, Մոսկվա, 1881, էջ 3: